Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2774
24575

346

85
Q.56

0245 15/VI-38

2011

3-2

# ՀԵՐԿՈՒԼԷՍ

## ՀԱՆԱՔ ՄԷԿ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

1002
6130

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ԷՄԻՆԻ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

1891

Էմին Տէր-Գրիգորեանցի Տպարան։

ԵՐԵՒԱՆ

857-ah

8-2

Дозволено Цензурою. Тифлисъ, 15-го Апрѣля 1891 года.

Къ представленію дозволено. Тифлисъ, 27 Апрѣля 1891 года.

# ՀԵՐԿՈՒԼԷՍ

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

---

ՇԼՕՊՍ, *պանսիօնի դիրեկտոր։*

ԷՐՆԵՍՏԻՆԱ, *նորա աղջիկը։*

ՇՐԷՅՖ, *ցիրկի դիրեկտոր։*

ՏՐՈՒՍՍՕ, *համալսարանի կանդիդատ։*

ՊՈՒՐՅԼԷՐ, *մականվանված Հերկուլէս։*

ՀԱՆՍ.
ԱՎԳՈՒՍՏԱՅ. } *Հիւրանոցի ծառաներ։*



*Տեսարանը ներկայացնում է „Կանաչ իշի“ հիւրանոցը։ Հիւրանոցի ընդհանուր դահլիճն է։ Մէկ դուռը խորքում, իսկ աջ և ձախ երկու երկու դռներ, որոնց վերայ մակագրուած են՝ 1, 2, 3 և 4։ Ա՛ռաջին երկու դուռը ձախ՝ և միւս երկուսը՝ աջ։ Լուսամուտներ և մի քանի աթոռներ բեմի վերայ։*

---

## ՏԵՍԻԼ 1.

### ՀԱՆՍ և ԱՎԳՈՒՍՏԱ

Հանսը *«էրմո՞ւկ է մատրո՞մ, Ավգո՞ստոն կարգի է քէրո՞մ ասնո՞ւնէրը և արքո՞մ է նորանց վէրայի ընդը։»*

ԱՎԳՈՒՍՏԱ

*Բաւական է մաքրես. մարդ էլ կարծում է թէ մի աշխատաւոր պատուղ ես։ Աւելի լաւ*

կլինէր, որ երրորդ նօմէրի վարագոյրները փոխէիր։ (Հանոը դի փոէր ը—ռ է գալէս։ Ավգո—ուստան ա—ելի ոդիպոդական յ—ով)։ Ախար հներն էլ լուանալու չեն տուած։ (Հանոը ա—ելի է ը—ռ գալէս)։ Զգուելի։ (Բուլկոցոֆ)։ Ցոյսդ ինձ վերայ ես դնում, ի՞նչ է... (Հանոը բուլդովին է ը—ռ գալէս։ Ավգո—ուստան, մօտենալով. պապա—՛ է Հանոին և երեսը երան է դարձնում)։ Ինչո՞ւ. ինչո՞ւ չես ուզում պատասխանել ինձ. լա՞լ ես, ի՞նչ է։

ՀԱՆՆ Բուլկոցոֆ։

Հա, լալ եմ։ Ինձ հանգիստ թողէք...

ԱՎԳՈՒՍՏԱ.

Ասացէք խնդրեմ, ի՞նչպէս չարացել է... (Ծէծաղելով և փաղաքանքով)։ Ի՞նչ է քեզ հետ պատահել, սիրելիս... (Հանոը Բուլկոցոֆ ա—ելի պինդ է ուրբ—՛)։

ՀԱՆՆ

Սիրելի, բայց ոչ քեզ համար։

ԱՎԳՈՒՍՏԱ.

Վաղուցվանի՞ց։

ՀԱՆՆ

Այն օրուանից, քանի որ սկսել ես դուր գալով հաճոյանալ ամեն մի կենդանի հետ, քանի որ սկսել ես նորանց հետ սիրակատիկ անել։

ԱՎԳՈՒՍՏԱ.

Ես, ինչպէս ազախին, ամենի հետ պէտք է քաղցր վարուեմ։



ՀԱՆՆ

Մի արդարացէք խնդրեմ։

ԱՎԳՈՒՍՏԱ.

Չեմ էլ մտածում։

ՀԱՆՆ

Հիմա մեր մէջ ամեն բան վերջացած է։ Լսո՞ւմ էք, օրիորդ Ավգուստա։ Ես շատ էի նայում, շատ էի համբերում, իսկ հիմա տեսնում եմ որ՝ անտանելի է դառնալ։ (Վէր է թը—ցո—՛ ոչ—ուրբ—կը)։

ԱՎԳՈՒՍՏԱ.

Դու ուրեմն՝ առանց հանաքի՝ ինձ վերայ նեղացե՞լ ես։ (Աչքառո—ուով)։ Հանս դու էլ չե՞ս սիրում ինձ։ (Գլ—խը նորա ո—ոչ վերայ է դնո—՛)։

ՀԱՆՆ (Գացո—ն—ով)։

Լաց մի՛ լինէք, օրիորդ Ավգուստա, ես ձեզ սիրում եմ, Աստուած վկայ է սիրում եմ։

ԱՎԳՈՒՍՏԱ (Ն—ելիորելով)։

Հա, հա, հա, ինչպէս ծիծաղալի ես։

ՀԱՆՆ (Նեղանալով)։

Դուք ինձ միշտ յիմարի տեղ էք դնում։ Վերջապէս, ես ձեզ կասեմ, առանց հանաքի, որ...

ՉԱՅՆ ԴՐՍԻՑ

Էյ... շուտ արէք։

ԱՎԳՈՒՍՏԱ.

Ա... լսում ես. Շրէյֆը քեզ կանչում է։

ՇՐԷՅՖ

Էյ... Սիւբաուկս։

ԱՎԳՈՒՍՏԱ

Եթէ դու ժամանակ չունես, տուր ես տանեմ։

ՀԱՆՆ բռնելով նրան։

Ի՞նչ... Ես ձեզ թողնեմ այդ աւազակի սենե՞ակը, երբէ՛ք։ Ես, ախար, տեսնում եմ թէ նա ինչպէս է ձեզ վերայ նայում...

ԱՎԳՈՒՍՏԱ

Շատ ուրախ եմ։ Նա գեղեցիկ տղամարդ է...

ՀԱՆՆ

Բայց ես կարող եմ նորա դունչ ու պռունկը ջարդել։

---

# ՏԵՍԻԼ 2.

## ՆՈՅՆՔ և ՇՐԷՅՖ

Հոգեծ լուրջ պէջակ և մրջինման ջրի-կ, ձեռ լաքած (лакированые) կօշիկներ և ճիպոտանման մրջակը ձեռին։

ՇՐԷՅՖ

Որտա՛ և կայծա՛կ։ Ո՞ւր է իմ սիւբաուկս։ Ամբողջ տարի է և չես կարողանում օրբե՞լ։ Սապրի՛ստի։ Ես սիրում եմ որ ամեն ինչ շուտ լինի. հէ՛յ։ Հոպ—լե՛ա։



ԱՎԳՈՒՍՏԱ ա—ա՜ն։

Ո՛ւհ. ինչպէս բարկացոտ է։

ՀԱՆՆ

Ննն...ներողութիւն։

ՇՐԷՅՖ

Ժամանակը վող է... (Ա—ա՜ն) Նամանաւանդ ինձ համար, ինչպէս ցիրկի դիրեկտորի, ակրոբատների խմբի դիրեկտորի։ (Ավգ—ուստային)։ Ա՜, դու այստե՞ղ ես, սիրունիկս։ Ապա ասա տեսնեմ, ինչպէս է ձեր քաղաքի կտորը։

ԱՎԳՈՒՍՏԱ

Շատ սիրուն քաղաք է։

ՀԱՆՆ

Կարելի է պարծենալ։

ՇՐԷՅՖ Ավգ—ուստային։

Իսկ հարուստ բնակիչներ շա՞տ կան։

ԱՎԳՈՒՍՏԱ

Այո՛, շատ կան. կան և հարուստ վաճառականներ, նկարիչներ, արտիստներ...

ՀԱՆՆ

Դարբիններ, կօշկակարներ...

ՇՐԷՅՖ

Որտե՛ղ և կայծակ։ Դու մէկն ես ասում, իսկ նա միւսը։ Ասա վերջապէս՝ այստեղ ձիերի մասին կամ հեծնելու մասին հասկացողներ կան։

ԱՎԳՈՒՍՏԱ

Ինչպէս չէ...

ՀԱՆՆ

Զարչի բոշաները...

ՇՐԷՅՖ Հանդէն

Լռի՛ր։ (Լավ—՞ է պանդակէ յոյն յոխ հանէց։

ԱՎԳՈՒՍՏԱ

Լսո՞ւմ ես։ Երկրորդ Ն—՞, կանչում են. գնա՛ Հանն։

ՀԱՆՆ դէ կոլ։

Նա սրա հետ մենակ կմնա՞յ։ Զե՛մ գնալ, բոլորովին չեմ գնալ։

ՇՐԷՅՖ Հանդէն

Մարշ։ Հոպ—լեա։

ՀԱՆՆ

Վազում եմ... (Մէ կոլ)։ Է՜, սպասիր, պոռոտախօս. ես քեզ կհեռևեմ։ (Ավգո—ոպոյէն դնան է անո—՞, բայց պեսնելով Շրէյֆէ ղարժո—՞ը դ-ջէն դ—նով փախչո—՞ է)։

ՇՐԷՅՖ նայելով Ավգո—ոպոյէն ոպէց դենվ գլ—ի)։

Բայց վատ չէ.—և, սապրիտոի, մարմնով բաւականին զարգացած է։ Պէտքէ սորան նայել թէ ինչպէս կլինի ձիու վերայ։ Լսի՛ր, սիրելի՛ս, քանի՞ տարեկան ես։

ԱՎԳՈՒՍՏԱ

Միւս ուտիքին կմտնեմ 20-երորդը։



ՇՐԷՅՖ

20-՞րդ։ Ափսոս, մի փոքր ուշ է, ոչինչ չի սովորիլ, ճիշտ որ ափսոս... բայց կարող է լաւ ձիարշաւ լինել... Ապա ձեռքդ տուր։

ԱՎԳՈՒՍՏԱ

Համեցէ՛ք...

ՇՐԷՅՖ

Ապա բարձրացրու...

ԱՎԳՈՒՍՏԱ

Համեցէք...

ՇՐԷՅՖ

Ապա այսպէս արա... (Ցույց է տալէ՝ դ ֆէ-ղէյէկ յ—)։

ԱՎԳՈՒՍՏԱ

Համեցէք...

ՇՐԷՅՖ յէ— տալով ո—ւէրէն և յէ—ֆէրէն։

Շատ լաւ և գեղեցիկ զարգացած է. շատ լա՛ւ կլինէր... Հմ... քսան տարի։ Բայց սորանից կարող էր մի բան դուրս գալ։

ԱՎԳՈՒՍՏԱ

Սա ի՞նչ է ուզում ինձանից։

ՇՐԷՅՖ

Ապա ատամներդ ցույց տուր...

ԱՎԳՈՒՍՏԱ

Համեցէք...

ՇՐԷՅՖ

Bon! Ձեր հիւրանոցը երկաթուղու այս գը-

նացքով կգայ մի երիտասարդ, որին ես անհամբեր սպասում եմ։ ուրեմն հէնց որ գալու լինի՝ իսկոյն կբերես ինձ մօտ։ Հասկանո՞ւմ ես հոգեակս։

ԱՎԳՈՒՍՏԱ

Հասկանում եմ։ իսկ ո՞ւմ կհարցնի։

ՇՐԷՅՖ

Ի՛նձ...

ԱՎԳՈՒՍՏԱ

Իսկ դո՞ւք ով էք։

ՇՐԷՅՖ ՃԻՃԱՂԼԱ՛Ի։

Այս քաղաքի կատրուում ինձ չեն ճանաչում։ այստեղ, ինչպէս երևում է, բոլորովին լրագիր չեն կարդում։ երբ ես յայտնի եմ մեծ տէրութիւններում... (Ա-գո-ստայն ղեղտելով ա-ռա՛-ռ է)։ Եթէ մէկը հարցնելու լինի դիրկի և ակրոբատների խմբի դիրեկտորին, պ. Բենոյին, Ֆրիդրիխսհամից եկած, իմացիր որ այդ յայտնի Բենոն՝ ե՛ս եմ։ Ես ի՛նքս։ Հասկանո՞ւմ ես։

ԱՎԳՈՒՍՏԱ

Պ. Բենո։ Հասկանում եմ։

ՇՐԷՅՖ

Այն պարոնը, որին ես սպասում եմ, նոյնպէս Եւրոպական հռչակ ունի—Հերկուլե՛ս, ուժեղ, արտիստ բուն նշանակութեամբ. ոչ մի բոպէ չանցկացնես, իսկոյն ինձ մօտ բեր... Ապա մի վեր թռիր... (Զեռ-էերը ֆյո՛ռ է նորա ոեչէը և ռ-ղռ՛ռ է բարձրացնել)։



# ՏԵՍԻԼ 3.

## ՆՈՅՆՔ և ՀԱՆՍ

ՀԱՆՍ մօտենալով նորանց, ապառնալէ-ով)։

Ապա՞. ես էդպէս էլ գիտէի... ես էդ ըղգում էի... ոզորմա՛ծ տէր։

ՇՐԷՅՖ բարկացած։

Հէ՛։ Քե՞զ ով կանչեց։

ՀԱՆՍ կակղած։

Ես կարծեցի չէիք հրամայիլ...

ՇՐԷՅՖ

Մի բաժակ գարեջուր, նո՛մերս.—շուտ։ Հո՛պ—լեա։

ՀԱՆՍ գնալով ճաշարան։

Անիծված ճղճղան։

ՇՐԷՅՖ

Հա՛լա։ (Հանը կանգնո՛ւմ է դողալով։ Շրէյֆը նորան ռ-ղղ-ռ է)։ Կուրծքդ դուրս գցի՛ր, գլուխդ յետ տար... (Շոլտֆռ-ռ է յեռ-էերը և ռ-ռերը)։ Օ, ոապրի՛ստի, ի՞նչ մկանո՞ւնք. լաւ ակրոբատ կըլինէր։ Ո՞ր տարուն ես։

ՀԱՆՍ դողալով ռ-ռանյին։

Զինուոր խոմ չե՞ն տանելու... Ո՞ը... խաբեմ։—գեռ երեսուն տարուայ մէջն եմ։

ՇՐԷՅՖ

Երեսո՞ւն. դո՛ւրս կորիր—ժամանակդ անցել է, ոչինչ չես կարող սովորիլ։ Ափսոս որ առաջուց չես ընկել ձեռքս...

ՀԱՆՍ

Է՜, փառք Աստուծոյ, բանի պէտք չեմ։ (Դո՜ւռ է վարդ՜)։

## ՏԵՍԻԼ 4.

### ՇՐԷՅՖ և ԱՎԳՈՒՍՏԱ

ՇՐԷՅՖ «Էրով Դայելով Ավգո՜ստայի վերա։

Զգուշացիր սիրունիկս. չմոռանաս նորան ինձ մօտ ուղարկել... հա, á propos... ապա ոտրդ ցոյց տուր... (Զանգակ)։

ԱՎԳՈՒՍՏԱ

Ներողութիւն, զանգ տուեցին... (Դո՜ւռ է վարդ՜)։

ՇՐԷՅՖ

Լա՜ւ դատ է, ես իմ Աստուած. charmant! (Վարդ՜ է նորա եարէց)։

## ՏԵՍԻԼ 5.

### ՇԼՕՊՍ և ԷՐՆԷՍՏԻՆԱ

ՇԼՕՊՍ հէն յեռվ հագնուած, դռնոմ է էրնէստինայի հետ, ուղղորդուելով դայելով սենեակը. ապա յետոյ ընդունէ ուրիշներ և խոսոյներ կոն։

Եթէ ես չեմ սխալվում, կարծեմ մենք „Կանաչ իշի“ հիւրանոցումն ենք. այնպէս չէ՞։

ԷՏՆԷՍՏԻՆԱ

Այո, պապա՛. մենք այն հիւրանոցումն



ենք, ուր և պ. Տրուսսոյին ենք խնդրել գալու։

ՇԼՕՊՍ

Բայց և այնպէս ճիշտ տեղեկանալու համար, լաւ է մենք ծառային կանչենք. այնպէս չէ՞, էրնէստինաս։

ԷՐՆԷՍՏԻՆԱ

Ի հարկէ պապա։

ՇԼՕՊՍ

Պարո՛ն ծառայ... Պարո՛ն ծառայ...

## ՏԵՍԻԼ 6.

### ՆՈՅՆԸ և ՀԱՆՍ

ՇԼՕՊՍ

Կարելի՞ է իմանալ. այս չէ՞ արդեօք „Կանաչ իշի“ հիւրանոցը։

ՀԱՆՍ

Իսկ և իսկ. այդ մինչև անգամ կարող էք մակագրիցն էլ իմանալ։

ՇԼՕՊՍ

Միանգամայն ճշմարիտ է... (Էրնէստինային)։ Սա շատ խելօք նկատեց. ուղիղ չէ՞, էրնէստինաս։

ԷՐՆԷՍՏԻՆԱ

Այո, պապա։

ՀԱՆՍ

Այ՛, համեցէք այստեղ. № 2ը ազատ է, ընտրովի նոմէր է։

ՇԼՕՊՍ

Շատ շնորհակալ եմ։ բայց ես ձեզ պէտքէ նկատեմ, որ մենք շատ կարճ ժամանակ կը մնանք, որովհետև մենք վաղը պէտքէ վերադառնանք Ֆրիդրիխսհամ։ Ճշմարիտ չէ՞, էրնէստինա։

ԷՐՆԷՍՏԻՆԱ ՔՈՐՆԱԼՍ։

Այո, պապա։

ՇԼՕՊՍ կամենում է գնալ դէպի №-ը, բայց վերադառնում է։

Եւ կրկին ես ձեզ պէտքէ խնդրեմ շատ հարկաւոր գործի համար. ես կբացադրեմ կարճ բառերով և յուսով եմ, որ դուք այնքան խելօք էք, որ իսկոյն կհասկանաք...

ԷՐՆԷՍՏԻՆԱ

Ախ, պապա, դուք նորան գործից յետաձգում էք...

ՇԼՕՊՍ

Ո՛չ, էրնէստինա, շատ կարևոր գործ է. աշ, ես էլ մոռացայ... ինչի համար է՞ր... դու ինձ, էրնէստինա, շփոթեցիր, դու չե՞ս յիշում թէ ես ինչի համար էի ուզում հարցնել...

ԷՐՆԷՍՏԻՆԱ

Ես չգիտեմ թէ ինչի համար էիք մոռացում, պապա։

ՇԼՕՊՍ

Այդ ուղիղ է. դու շա՛տ խելօք նկատեցիր... (Հանում է)։ Այստեղ ձեզանում անտարա-



կոյս հանդարտ է, խոհեմ է և ճիշտ... ես պէտքէ նկատեմ ձեզ, որ ես սիրում եմ հանդարտութիւն և հանգստութիւն, որովհետև ես պարապում եմ աստուածաբանութիւնով, իսկ էրնէստինայիս հետ՝ հեղինակում ենք հոգևոր—բարոյական գրքեր մեր սանների համար. կարող եմ ասել, որ դեռ երեխայութիւնից ես զանազանվում էի սուր խելքով, հեղ բնաւորութիւնով և զարմանալի՛ պերճախօսութիւնով։ Ցուսով եմ դուք հիմայ ինձ հասկացաք և կկատարէք իմ խնդիրս. դա շատ ծանր և մեզ համար կարևոր գործ է։ Ճշմարիտ չէ՞, էրնէստինա։

ԷՐՆԷՍՏԻՆԱ ը—սամո—ոթց նայելով։

Ճշմարիտ է, պապա։

ՀԱՆՍ

Ախր ես ձեր հրամանը ինչպէս կատարեմ, քանի որ դեռ չէք ասել թէ ի՞նչ էք ուզում։

ՇԼՕՊՍ

Շատ իրաւացի էք նկատում, պարոն ծառայ. այնպէս չէ՞, էրնէստինա։ Բանը նորանումն է, սիրելիս, որ մենք այս գնացքով սպասում ենք, որը...

ՀԱՆՍ

Որը հիմայ եկած կլինի...

ՇԼՕՊՍ

Շնորհակալ եմ ձեզանից, ես էլ հէնց այդ

էի կամենում ասել. ահա ուրեմն այդ գնացքով գալու է մէկ երիտասարդ, գեղեցիկ, կըրթված երիտասարդ, որը աւարտել է Աստուածաբանութեան կուրսը. ինքը շատ համեստ, ամենաբարի բարոյականութեան տէր մարդ է. ես նորան հրաւիրել եմ պանսիօնումս դասատուութեան համար. յուսով եմ, որ նա երբեմն ինձ կատարելապէս կփոխարինի. ուղիղ չէ՞, էրնեստինա։

ԷՐՆԷՍՏԻՆԱ

Դէ՛ ի հարկէ, պապա։

ՇԼՕՊՍ

Այդ պատճառով էլ ես ձեզ խնդրում եմ, որ եթէ մէկը հարցնելու լինի Ֆրիխդրիսհամից եկած դիրեկտորին, իմացէք որ այդ դիրեկտորը...

ՀԱՆՆ

Երևի դո՛ւք էք, պարոն։

ՇԼՕՊՍ

Իսկ և իսկ։ Սա շատ ճարտարամիտ է, էրնէստինա։

ԷՐՆԷՍՏԻՆԱ

Ախ պապա. դուք յաւիտեան չէք վերջացընելու. գնանք... (Հանդին)։ Եթէ այն երիտասարդը, որին մենք սպասում ենք այս գնացքով, կհարցնի դիրեկտորին,—ուղարկեցէք մեր նոմէրը... դէ՝, գնանք պապա։ (Շլոպը, ի կողմ դանը-



լով Հանդին, ականջը՝ մէկ բան է ասում)։

ՀԱՆՆ

Շատ բարի, կբերեմ...

ՇԼՕՊՍ

Դա շա՞տ հարկաւոր է... (գնում են)։

## ՏԵՍԻԼ 7.

ՏՐՈՒՍՍՕ հագնուած է հին յեսով երկայն ֆրակ, բարձր կանգնած շապկի օյնէռներով. ոտքը է դուրս գալիս գլուխը մինչև դունչը)։

Տ՛ս... լսեցէք... (Բարձր)։ Լսեցէք... (Ներս գալով) և այստեղ ոչ ոք չկայ... զարմանալի բան... Ահա և նոմէրները, բայց ես մտնելու իրաւունք չունեմ։ կարող է պատահել, Աստուած հեռու տանի, որ կ՛ընկնեմ մի որևէ կնոջ նոմէր։ Օ՛, խայտառակութիւն։ Ես կմեռնեմ ամօթից... շատ վատ դրութիւն կլինի... Ապա ի՞նչ անեմ ես։ Պիտի կանգնեմ մինչև որ մէկը այստեղով կանցնի։ (Կարդում է №№ը 1, 2, 3... Ավգուստոսն մտնում է № 3-ից ափսէի վերայ ջուր շիշ դրած։ Տրուսսն վեր է նայում։ Ավգուստոսն վերցնում է)։

## ՏԵՍԻԼ 8.

### ՏՐՈՒՍՍՕ և ԱՎԳՈՒՍՏԱ

ԱՎԳՈՒՍՏԱ

Ու՛հ։ Ինչպէս վախացրիք դուք ինձ, ես կա-

բոզ էի ջրի շիշը վեր գցել...

ՏՐՈՒՍՍՈ

Pardon, madame, m—lle, ներեցէք։

ԱՎԳՈՒՍՏԱ մի կողմ։

Բայց ո՞ր №-ից է սա։

ՏՐՈՒՍՍՈ շարունակ մի ոտից մի-ս ոտի վերայ փոփոխելով։

Ներեցէք, ես կցանկայի հարցնել ձեզ, բայց ես շատ անյարմար եմ զգում...

ԱՎԳՈՒՍՏԱ

Բայց ինչո՞ւ է այսպէս կուչ գալիս, վախում... Ա... հասկանում եմ։ (Տրուսսին)։ Եթէ ձեզ տղամարդկանց վերաբերուած բան է հարկաւոր, ես կկանչեմ Հանսին։

ՏՐՈՒՍՍՈ

Շատ ուղիղ է... ես կամենում էի ձեզ հարցնել պ. դիրեկտորի մասին, որը Ֆրիխդերիսհամից է եկած և որը ինձ այստեղ տեսութիւն է նշանակել։

ԱՎԳՈՒՍՏԱ ծիծաղելով։

Այ ինչ... իսկ ես կարծում էի... ինչ ծիծաղալի... բայց ոչինչ, բաւական դուրեկան է... կարծեմ սրա աչքերը կապտագոյն են։

ՏՐՈՒՍՍՈ մի կողմ։

Բայց ինչո՞ւ է սա այսպէս ծիծաղելով վերան նայում։ Կօճակներիցս մէկը խամ չի՞ բացվել...



ԱՎԳՈՒՍՏԱ

Ուրեմն դուք ուզում էք պ. դիրեկտորի՞ն տեսնել։

ՏՐՈՒՍՍՈ

Ներեցէք, որ այդպէս է. ես խղճահարվում եմ. ես ձեզ նեղութիւն պատճառեցի։

ԱՎԳՈՒՍՏԱ

Ի՞նչ էք ասում. դա մեր պարտականութիւնն է։

ՐԷՆՕՑԻ ՁԱՅՆԸ ԴՐՍԻՑ

Ա՛մպ և որոտ։ Էյ, ձեզանից մէկը... էյ...

ԱՎԳՈՒՍՏԱ

Էս պ. դիրեկտորի ձայնն է, համեցէք 4 №-ը։

ՏՐՈՒՍՍՈ դողալով։

Նա, ինչպէս երևում է, սաստիկ բարկացած է...

ԱՎԳՈՒՍՏԱ

Ինչո՞ւ չէք գնում։

ՏՐՈՒՍՍՈ

Ներեցէք. ես մտադիր եմ շորերս փոխելու. կարծեմ օձիքս մի փոքր ծալծլլուած է։ Ախար նա իմ ապագայ իշխանաւորս է և, ըստ երևոյթին, շատ խիստ է...

ԱՎԳՈՒՍՏԱ

Ո՛չ. նա միայն շատ անհամբեր է. սիրում է որ իրա մօտ ամեն բան կենդանի՛, արագ լինի։

ԲԼԵՆՕՅԻ ՁԱՅՆ

Ի՞նչ էլաք սատանա՛ն ձեզ տանի... էյ։

ԱՎԳՈՒՍՏԱ.

Դէ գնացէք՝ թէ չէ նա աւելի կբարկանայ։ (Տրուած ռէկ։ թայլ աւաջ է անում և մի փոքր յետոյ վերջապէս վախվխելով մտնում 4 №-ը)։

## ՏԵՍԻԼ 9.

ԱՎԳՈՒՍՏԱ. մեկն։

Ախ, ինչ ծիծաղալի մարդ է. սարսափելի վախկոտ, բայց ինձ շատ դուր է գալիս, որ նա այսպէս համեստ է։ մի քիչ առաջ, որ ես նայեցի նորան՝ նա ոտից մինչև գլուխ կարմրեց... բայց հազվագիւտ է, համեմատելով ժամանակիս մարդկերանց հետ։ (Գնում է)։

## ՏԵՍԻԼ 10.

ՀԱՆՆ յուր կողմից մտնելով։

Ինչպէս զահլա տարաւ էս ծերունին... իսկ նրա աղջիկը վատ չէ՝ և, կարծես, ես նրբա դուրն եկայ... նա, ինչ որ ինձ շատ էր նայում... հիմայ կարելի է հանգստանալ և լրագիր կարդալ։ (Գրպանից լրագիր է հանում և մեկնվելով ամուռի վերայ)։ Ա՜...այ, ժիւլ Ֆավրի ճառը... պէտք է կարդալ... (Մի քանի դրանից լսում է զանգակի յայն)։ Ա՛յ անդունդն իջնէք հա՛... չեն թողնում մարդ գործով զբաղվի. բոլորովին մի-



ջոց չկայ, որ մարդ քաղաքականութեան հետևի։ (Նայում է լուսամուտից)։ Ի՞նչ ինչ խսպանիացի է դէս պատուելլ... գալիս է ուղիղ էստեղ... էհ, էսօր սրանցից քանիսը թափեցին էստեղ...

## ՏԵՍԻԼ 11.

ՊՈՒՐՅԼԷՐ և ՀԱՆՆ

ՊՈՒՐՅԼԷՐ հագնուած է գոյնզգոյն շորեր։ նստում է մի փոքր նստոց։

Ես Հերկուլէս—յայանի արտիստս
Ուժեղ, ժօնգլէր և ակրօբատ...
Մեծ տազանգով հպարտացած՝
Հոգւով—պոյէտ, արիստոկրատ։
Ինձի համար չնչին բան է
Փթանոցներ բարձրացնել,
Եւ տրապէցով այս ու այն կողմ
Օդում թռչել և պտտվել։
Ծիծաղում են մարդիկ վերաս,
Որ ծռվում եմ աղեղնաձև,
Բայց կան ինձնից շատ ծռվողներ...
Որոնց առաջ ես հէչ, ոձև։
Այդպէս մեզնում միշտ մոդայ է.
Որ թռչում են, ձիարշաւում.
Բայց կան և շատ ակրօբատներ...
Ոսկում խրված՝ մեզ են նայում։
Էյ, ծառա՛յ։ նո՛մէր, ամենալաւ նոմէր. որ լուսամուտից գեղեցիկ տեսարան ունենայ, ա-

մենանո՛ր լրագիր, մի բաժակ գարեջուր, հորթի կօտլէտ, սէլտէրի ջուր և գիշերվայ գտակ։

ՀԱՆՍ

Լսում եմ, ձերդ պայծառափայլութիւն. իսկ ձեր չէմոդաննե՞րը։

ՊՈՒՐՑԼԷՐ

Ի՞նչ չէմոդաններ։ Ախ, հա՜, չէմոդաննե՞րս։ Նրանք կստացվեն միւս գնացքով, իսկ առ այժմ վեր առ շորերս... (Շպրտում է կապոցը)։

ՀԱՆՍ

Սա է ձեր շորերը։

ՊՈՒՐՑԼԷՐ

Իսկական արտիստը միշտ թեթև է ճանապարհորդում։ ա՛ժի՛ նեղութիւնը, իսկական տաղանդը, ամեն ինչ և ամեն տեղ իր համար կգտնի. ամեն բան նորա ծառայութեան համար պատրաստ է. երևի—ինձ համար ամեն ինչ պատրաստո՞ւած է։ Իմ նոր դիրէկտորս, ինչպէս երևում է շատ ուրախ է, որ ինձպէս արտիստ է հրաւիրել... (Հանկին) ես իմ ճարտարութիւնով կը զարմացնեմ նորան։ (Մի փոքր ժանգլէրական յե՛ւէր է անում)։ Ո՞ր Ֆուրմն է կենում դիրէկտորը։

ՀԱՆՍ

Ֆրիդրիխսհամից եկա՞ծ։

ՊՈՒՐՑԼԷՐ

Հա՛, հա՛, Ֆրիդրիխսհամից։ (Անհամբերությամբ)։



ՀԱՆՍ

№ 2-ում։ Նա շատ անհամբերութեամբ սպասում է ձեզ։

ՊՈՒՐՑԼԷՐ

Bon!

ՀԱՆՍ

Էլ բան կհրամայէ՞ք։

ՊՈՒՐՑԼԷՐ

N-on!

ՀԱՆՍ առանձին։

Է՜, ես հիմայ հասկանում եմ։ այս այն ուժեղն է, որի մասին այստեղ շատ էին խօսում։ իսկ ծերունին, ինչպէս երևում է ակրոբատների խմբի կառավարիչն է, ասում են որ նա էլ է օդի մէջ հիանալի գլորվում ու պտտվում... Ա՜, ահա և ինքը։

---

# ՏԵՍԻԼ 12.

## ՆՈՅՆԻ, ՇԼՕՊՍ և ԷՐՆԷՍՏԻՆԱ

ՊՈՒՐՑԼԷՐ ղանգլան պօղանէր է ընդունում։

ՀԱՆՍ Պուրցլէրին։

Ահա՛ ինքը դիրէկտորը։

ՊՈՒՐՑԼԷՐ առանձին։

Պէտք է նորան ցոյց տալ իմ ամբողջ շարժումներիս թեթևութիւնները։

ՇԼՕՊՍ Էրնէստինային։

Պէտք է կրկին հարցնել. չի՞ եկել արդեօք այն երիտասարդը այս գնացքով։

ՊՈՒՐՅԼԷՐ ԲԱՐՅԷ։

Հարցնելու նեղութիւն մի քաշէք. նա ամբողջապէս ձեզ ծառայելու համար պատրաստ է։

ՇԼՕՊՍ ղարմացած նայելով։

Ա՛... (Բարկենլով)։ Ուրեմն դուք իմ նամակս ստացե՞լ էք։

ՊՈՒՐՅԼԷՐ

Ի հարկէ, և, ինչպէս տեսնում էք, աշխատեցի չուշանալ. bon soir, bon soir... (Շտապելով սենեակ է նորա յետը)։ Ես այրվում եմ անհամբերութիւնից. ուզում եմ մի կերպ հունարս ցոյց տամ այստեղ։

ՇԼՕՊՍ

Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ։ Յուսով եմ, որ դուք ինձնից գոհ կլինէք։

ՊՈՒՐՅԼԷՐ ղանապան յետը անելով։

Յուսով եմ, որ դուք էլ ինձնից բաւական կլինէք։ Ինչ քաղաքներում որ եղայ՝ ամեն տեղ աքանչեցրեցի. իմ անունս ամեն անկիւններում անգամ, ա՜յ, այսպէս ահագին տառերով էր տպագրվում, á propos—ձեր գարդերո՞ը։

ՇԼՕՊՍ

Գարդերո՞ը։ Թէև ցայսօր այդպիսի կարգ ինձանում մոդրած չէր, բայց եթէ դուք կբարեհաճէք... բայց և այնպէս ցանկալի էր ինձ ձեր մէտոդի հետ ծանօթանալ...



ՊՈՒՐՅԼԷՐ

Օ՜, շատ էֆֆէկտ ունի։ Եթէ այստեղ խալիչա լինէր, ես իսկոյն իմ արհեստս ցոյց կտայի։

ՇԼՕՊՍ էրնէստինային,

Օտարոտի՛ է... էլ ինչի՞ համար է սորան գորգ հարկաւոր, էրնէստինա։

ԷՐՆԷՍՏԻՆԱ

Զգիտեմ, պապա։

ՇԼՕՊՍ

Ներողութիւն. ես կցանկայի հարցնել ձեզ, թէ ի՞նչպէս էք սկզբում վարվում երեխաների հետ...

ՊՈՒՐՅԼԷՐ

Շատ հասարակ, սկզբում ես, ուղղում, դրբստում եմ նորանց ձեռքերը և ոտները ամեն կողմ ծռելու համար, կակղացնելով դրանց...

ՇԼՕՊՍ

Բայց այդ բաւական երկիւղալի է...

ՊՈՒՐՅԼԷՐ

Ցեռոյ ես սկսում եմ մարմնամարզութիւնը. կանգնացնում եմ նորանց ձեռքերի վերայ, ի հարկէ, ոտները բարձրացրած... բայց, ինչո՞ւ մենք կանգնած։ Նստեցէք խնդրեմ։ (Ելնելով

ՊՈՒՐՑԼԷՐ ամոռոռ վռվաշ, նայոռ է էրնէսթինայէ էլէրայ։

Charmè mademoiselle... (Խբէլալ Շլօպոէ ռռին և ցույց տալով էրնէսթինայէ էլէրայ)։ Բաւական լաւ զատ է, ճշմարիտ։ Շատ գեղեցիկ է. միթէ սա ձեր աղջիկն է։

ՇԼՕՊՍ նեղացած։

Կարող էք հաստատ համոզված լինել... իմ սեփական երեխան է...

ՊՈՒՐՑԼԷՐ

Զարմանալի է. իսկ թեթև շարժողութիւններ ունի՞։

ՇԼՕՊՍ

Այսինքն ինչպէս թէ՝ թեթև շարժողութիւն։

ՊՈՒՐՑԼԷՐ

Վայելու՞չ է իրան ձիու վերայ պահում։

ՇԼՕՊՍ

Ի՞նչ էք ասում. ես մինչև հիմայ դեռ թոյլ չեմ տուել ձիու վերայ նստելու։

ՊՈՒՐՑԼԷՐ

Հասկանում եմ... ուրեմն նա պարապում է վերին շրջաններում. լարախաղութեամբ կամ տրպեցիայի վերայ՞։

ՇԼՕՊՍ Էրնէսթինայէն։

Էրնէսթինաս այս ի՞նչ լարախաղի համար է ասում։

ԷՐՆԷՍՏԻՆԱ

Զգիտեմ, պապա։



ՊՈՒՐՑԼԷՐ

Խոհեմութիւն էք անում, խոհեմութիւն էք անում պ. դիրէկտոր... (Ցույց տալով էրնէսթինայէն)։ Իսկ ոտը, ոտը. իսկ ի՞նչ բիւստ... charmant! Առաջին դէբիւտի համար մենք սորա հետ կըպարենք մի նորաձև պար։

ՇԼՕՊՍ Էրնէսթինայէն։

Էրնէստինաս, յարմա՞ր է արդեօք քեզ համար նորաձև պար պարել։

ԷՐՆԷՍՏԻՆԱ

Զգիտեմ ճշմարիտ, պապա։

ՊՈՒՐՑԼԷՐ

Վերջապէս հարկաւոր է մշտական շարժողութեան մէջ լինել։ (Շօշափելով Շլօպոէ ռռէրը)։ Ձեր մկանունքները շատ են թուլացել, բայց mademoiselle էրնէստինայի... (Կանգնում է մօտենալ նորան, բայց Շլօպոը նորան չէ նայում)։

ՇԼՕՊՍ

Pardon, un instant... ես կկամենայի ձեզ հետ խօսել առհասարակ ամեն գիտութեանց դասաւանդութեան կանոնների մասին... որովհետև մեր տարրական դասարաններում ուր աշակերտները...

ՊՈՒՐՑԼԷՐ

Pardon! երևի դուք դեռ ընթրիք չէ՞ք արել։ Ես առանձին բաւականութեամբ ընդունում եմ ձեր առաջարկութիւնը մի շիշ գինու...

ՇԼՕՊՍ

Մի շիշ գինո՞...

ՊՈՒՐՑԼԷՐ

Ես ձեզ շատ հետաքրքիր բաներ կպատմեմ իմ ճանապարհորդութեանց և արած յառաջադիմութեանցս մասին։ Բայց, երևի, դուք արդէն կարդացած կլինէք իմ մասին լրագրներում, որոնց մէջ ինձ համար բաւական նախանձելի գրուբիւններ կան. մէկ օրվայ մէջ ես 12 առաջարկութիւն ստացայ. բայց բոլորովին չեմ ափսոսում, որ միայն ձեր առաջարկութիւնն ընդունեցի, որովհետև ես բաղդ ունեմ ձեր փոքրիկ թիթեռի ուսուցիչ լինել... allons mon principal... (Մէկնում է յետոյը Շլեպոին, բայց էրնէստինայն է գոռում նրանք և, գնալով նորա հետ յոխ, մի ինչ ծիծաղելի բան է ասում)։

ՇԼՕՊՍ

Բոլորովին սորանից բան չեմ հասկանում։ Սա երևի, կամ չափազանց ուսում առած և զարգացած է, կամ... (Գնալով)։ Ապա մի խօսեմ ես նորա հետ Աստուածաբանութեան մասին... (Գնում է)։

---

# ՏԵՍԻԼ 13.

## ԱՎԳՈՒՍՏԱ և ՀԱՆՆ

պանսիոնի դահլիճ գալիս են։

ԱՎԳՈՒՍՏԱ

Է՛, Հանս, ի՞նչպէս է քո նոր կենողը։



ՀԱՆՆ

Ինչպէս երևում է շատ երևելի մարդ է. դա մէկ հասարակ մարդ չի, գիտէ՞ք, դա Ֆրիդրիխսհամից եկած դիրեկտոր...

ԱՎԳՈՒՍՏԱ

Այ թէ լմացար հա... Ֆրիդրիխսհամից եկած դիրեկտորը իմ մասումն է կենում։

ՀԱՆՆ

Ի՞նչ էք ասում. ի՞նչպէս թէ ձեր մասումն է, բաւական է m-elle Ավգուստայ, դուք ինձ բոլորովին յիմարի տեղ էք դնում։ Այն երիտասարդին, որին նա սպասում էր, ախար, ես ուղարկեցի նորա №-ը...

ԱՎԳՈՒՍՏԱ

Խելո՛ք կաց... խելագարվե՞լ ես, ի՞նչ է։ Ես նորան ուղարկեցի դիրեկտորի մօտ։ (Քնքշանքով)։ Բայց գիտե՞ս, Հանս, ինչով է պարապում պ. դիրեկտորը։

ՀԱՆՆ

Ի՞նչպէս չէ։ Նա ակրոբատների և ձիարշաւների խմբի կառավարիչ է։

ԱՎԳՈՒՍՏԱ

Այո՛, հէնց ինքն է. երևի լաւ օյինբաղ է։ Երևակայիր քեզ, Հանս, երբ ես մտայ նրա սենեակը, ինչ ես կարծում, ի՞նչ տեսայ։

ՀԱՆՆ

Ի՞նչ։

ԱՎԳՈՒՍՏԱ

Դիրեկտորը ձեռքերի վերայ կանգնած, ո-

տերը երկինք էր ցցել և ինչ օյիններ ասես՝ հանում էր։

ՀԱՆՆ ՅԻՅԱՂԷԼԼԻ։

Մի՞թէ։ Ձեռքերի վերայ էր կանգնե՞լ։ Դա, ինչպէս երևում է, շատ հեռաքրքիր կլինէր... բայց նա այնպէս ծեր է...

ԱՎԳՈՒՍՏԱ

Նա՞... Ծե՞ր է...

ՀԱՆՆ

Ապա ի՞նչ է, երբ ամբողջապէս սպիտակած է։

ԱՎԳՈՒՍՏԱ

Դէ, տեսնո՞ւմ ես, դու էլի կսկսես վիճել, նրա մազերը սև են՝ սաթի պէս. դու, Հանս, միանգամայն կուրացել ես։ (Փաղաքշելով)։

ՀԱՆՆ

Կամ ասում է թէ ես յիմար եմ, կամ կուրացել եմ։ Ինչպէս երևում է սա էնքան էլ սիրահարված չէ ինձ վերայ։ (Մտածելով)։ Բայց էլի չեմ կարողանում հասկանալ թէ ինչպէս է նա գլխի վայր կանգնում։ Ապա մի դրան արանքից նայեմ, էլ օյին—մոյին հո չի հանում։ (Նայելով № 2 դռանից)։

---

## ՏԵՍԻԼ 14.

### ՀԱՆՆ, ՇՐԷՅՖ և ՏՐՈՒՍՍՈ

Վ.ԷՐԼԻՆԵՐԸ դռնոց էն № 4 դռանից։

ՇՐԷՅՖ

Կրկին անգամ շնորհակալ եմ ձեզնից, ձեր



ճշտութեան համար. այդ սիրում եմ... Ես առաւել որ իմ սկսված գործս վերջանալու վերայ է... Շնորհակալ եմ։ Ձեզ կարող հաւատալ թէ ինչ անհամբերութեամբ ես ծարաւում եմ տեսնել ձեր արհեստը... Յուսով եմ, որ դուք հէնց հիմա մի բան կանէք...

ՏՐՈՒՍՍՈ

Ա՛խ, առանձին բաւականութեամբ, բայց իմ իրերս դեռ պայուսակումն են, կարող է...

ՇՐԷՅՖ

Օ՛, չէ՛, հարկաւոր չէ։ Այստեղի յատակը շատ պինդ է. դուք ինձ ցոյց տուէք միայն ձեր երևելի օդային թռիչքը...

ՏՐՈՒՍՍՈ ուռանչելով։

Օդային թռի՞չքը։ Ես ոչ մի դասախօսութիւն չեմ յիշում այդ բնաբանի վերայ հիմնված...

ՇՐԷՅՖ

Կամ ձեր երրակի սալտո—մորտալէն։

ՏՐՈՒՍՍՈ

Սալտո—մորտալէ՞ն։ Սա, կարծեմ, մարմնամարզութեան մասին է խօսում... Ախ, ես բոլորովին այդ արհեստը սովորած չեմ։ Եթէ սորան խոստովանեմ-կբարկանայ և տեղից կդրկի ինձ... (Շրէյֆին)։ Ուրախութեամբ ես կկատարեմ ձեր կամքը, բայց հիմայ ես չափազանց դաղրած եմ։

ՇՐԷՅՖ

Ա... ուրեմն նստեցէք խնդրեմ...

ՏՐՈՒՍՍՈ նստում է ամուսնոջ ծայրում։

ՇՐԷՅՖ

Զեզանում շատ կանայք կային։

ՏՐՈՒՍՍՈ կոպտաբար։

Ինձանո՞ւմ... և ոչ մէկը։

ՇՐԷՅՖ

Էհ, որտե՛ղ և կայծա՛կ։ Ես ասում եմ ձեր առաջվայ դիրէկտորի մասին։

ՏՐՈՒՍՍՈ

Այո. նա ունէ՛ր կին և շատ ուսեալ կին, նա...

ՇՐԷՅՖ

Օ՜, լաւ ձիարշաւ էր և գեղեցիկ թռիչքներ էր անում տրապէցիայի վերայ. գիտեմ։ Հին ժամանակներում մենք իրար հետ բաւական գործութիւններ ենք արել։

ՏՐՈՒՍՍՈ ամաչելով։

Ի՞նչ եմ լսում։

ՇՐԷՅՖ

Իսկ բոլո՞ր կանայքը քանի հոգի էի։

ՏՐՈՒՍՍՈ ամաչելով։

Ախ, սա հարցնում է աղախինների մասին. աղախինը, խոհարարը, դայեակը, լուացարարը... (Շրէյֆին)։ Բոլորը հինգ հոգի էին։



ՇՐԷՅՖ ամաչելով։

Հի՛նգ։ Այ քեզ խո՜ւմբ։ Եւ նա ուզում էր ինձ հետ հսկառակորդե՞լ. սապրի՛սմի։ (Տրուսսոյին)։ Ուրեմն իմացէք. ես պահում եմ տասը և երկու կին և ի՞նչ կնանիք...

ՏՐՈՒՍՍՈ

Աստուա՜ծ իմ։ Մի տանիր զմեզ 'ի փորձութիւն։ Սա խայտառակ մեղաւորներից է։

ՀԱՆՍ

Սիրտս ճաքում է, Է'լի. գլուխը տեսնում եմ, իսկ ոտները ո՛չ։

ՇՐԷՅՖ վէրջինալով նայում է Տրուսսոյին։

Ոչ մի կերպ չեմ կարողանում հասկանալ, որ այսպիսի թոյլ մարմնի մէջ ահագին ոյժ ծածկուած լինէր։ (Նորան)։ Ասացէք խնդրեմ առանց քաշվելու. քանի՞ փութ ծանրութիւն կարող էք ատամներով բարձրացնել։

ՏՐՈՒՍՍՈ

Ատամներո՞վ։ Աստուած վկայ է, չեմ կարող ասիլ...

ՇՐԷՅՖ

Ապա առ այժմ այս սեղանը բարձրացրէք... (Տէռնէլով Հանսին, որը նայում է դրան ծանրութիւն, վերցրէ է պուլիս)։ Որտե՛ղ և կայծա՛կ։ Դու, ինչպէս երևում է, շատ հետաքրքիր մարդ ես։

ՀԱՆՍ

Ինչպէս չէ. շատ հետաքրքիր է... Ավգուս-

տան ասում է, որ պ. դիրեկտորը գլխիվայր է կանգնում և ոտներով զանազան ծիծաղելի օյիններ է անում։

ՇՐԷՅՖ Էրկի-վով, հեռացնելով նորան ի կողմ։

Ի՞նչ դիրեկտորի մասին ես ասում։

ՀԱՆՆ

Ա՛յ, էս ծերունիի համար, որը ակրոբատների և ձիարշաւների խմբապետն է։

ՇՐԷՅՖ

Որո՞տ և կայծակ։ Իմ հակառակորդս այստե՞ղ է։ Ա՜—նա վաղուց դէպքի էր սպասում ինձ վնասելու համար և իմ խումբս խայտառակելու։ Սապրի՛սմի։ Մենք դեռ կտեսնենք, թէ ում արտիստներն են լաւ։ (Տրոտսոյին)։ Ես ձեզ վերայ մեծ յոյս ունեմ... Իսկոյն պէտք ցոյց տաք ձեր թեթև շարժմունքը և ոյժը։

ՏՐՈՒՍՍՕ ատ-ադյին։

Աստուած իմ։ Եթէ սա մարմնամարզութեան մասին է խօսում, ես լսպառ կխայտառակեմ։

ՇՐԷՅՖ

Սատանա՛ն տանի։ Ես ինքս, պ. հակառակորդ, վաղուց դէպքի էի մանգալիս քեզ հետ կռվելու համար... Ես նորան մենամարտութիւն կառաջարկեմ á la boks... Տեսնենք մեզանից ո՞վ ում կշպրտի օդը... (Հանում) Մի բաժակ ջուր. ես սաստիկ կատաղած եմ։ (Մառ է գալիս պոտոյաշ, Հանոը գնում է)։



# ՏԵՍԻԼ 15.

## ՆՈՅՆԿ և ՇԼՕՊՍ

ՇԼՕՊՍ նեղլոյաշ դուրս է գալիս յոկ կողմի դռնից։

Այս ոչինչի նման չէ։ Ես նորանից Աստուածաբանութեան մասին եմ հարցնում, իսկ նա ձիերի վերայ է խօսում, մի ինչ տրապէցայի, օդային թռիչքների... ինչի՞ է հարկաւոր էրնէստինայի՛ս այդ բաների մասին իմանալը։ Գլուխս պատռում է. ես երբէք այսպէս կատաղած չեմ եղել, ինչպէս այսօր, իսկ էրնէստինան երեխայի պէս ծիծաղում է։ (Շրէյֆը, պէտքնելով Շլօպին, ու�ում է յուրյակոի նորա վէրայ, բայց Հանոը, գալով նորա ատաջ, դալիս է քաժակ ջուրը։ Տրուսսօն տօպէնալով նորան, ինչ որ ասում է խնդրելով)։

ՀԱՆՆ ատ-ադյին։

Չինդրե՞մ հիմայ էս ծերունուց. մի՞թէ կըմերժի։ (Գլուխ տալով տօպէնում է Շլօպին, և կուլյէգ գալով)։ Պարոն դիրեկտոր։

ՇԼՕՊՍ բարկացած։

Ի՞նչ էք կամենում։

ՀԱՆՆ

Ես ուզում էի ձեզ խնդրել։

ՇԼՕՊՍ

Ասացէք...

ՀԱՆՆ

Ուզիդն ասած, քաշվում եմ... բայց գեսեմ,

որ դուք բարի էք և, ի հարկէ ինձ բացասիլ չէ՞ք։ (Շլօպ հանելով ժիլէտէ գրպանից փող, անցնելով դալիս է Հանսին)։

ՀԱՆՍ

Ո՛չ, փողի համար չէր... (Դնելով փողը է-ր գրպանը։

ՇԼՕՊՍ

Ապա էլ ի՞նչ վերջապէս։

ՀԱՆՍ

Ի սէր Աստուծոյ, կանգնեցէք, խնդրեմ, գլխի վայր։

ՇԼՕՊՍ զարմացած։

Ի՞ի՞նչ։

ՀԱՆՍ

Կանգնեցէք, խնդրեմ, գլխի վայր... Ձեռքերի վերայ։

ՇԼՕՊՍ

Գլխի վա՞յր... Ձեռքերի վերայ։

ՀԱՆՍ

Ավգուստան տեսել էր, ինչպէս դուք ձեռքերի վերայ կանգնել էիք, իսկ ես դեռ էդպէս բան տեսած չեմ... կանգնեցէք, խնդրեմ...

ՇԼՕՊՍ

Եւ դու համարձակվո՞ւմ ես... և դու համարձակվո՞ւմ ես։ Դէ՛, ասեցէք խնդրեմ. իմ տարիքս... և գլխի վա՛յր։

ՇՐԷՅՖ Տրտունջով։

Թողէ՛ք, ես սորա կողքերը պիտի ջարդեմ...



(Մօտենում է Շլօպին, ապառնալի յուրը ընդունելով)։ Մի, կեղծաւորէք, պ. դիրեկտոր. ես ձեզ գիտեմ։ Բայց և դուք երբէք այնպէս երևելի ակրոբատ չէք, ինչպէս, որ գոռում են ձեզ համար կաշառված թղթակից-քննիչները... Դուք պարանի վերայ խաղացո՛ղ էք և աւելի ոչինչ...

ՇԼՕՊՍ կատաղի զարմանքով։

Ես՞... պարանի վերայ խաղացո՞ղ...

ՇՐԷՅՖ

Դուք ուզում էք այստեղ մի քանի ներկայացումներ տալ... բայց այդ ձեզ չի՛ յաջողիլ... Դուք մոռացում էիք այստեղ զարմացընել, որ գլխիվայր կարող էք կանգնե՞լ։ Դա բաւական չէ՛. սապրի՛ստի։

## ՏԵՍԻԼ 16.

### ՆՈՅՆԳ, ՊՈՒՐՅԼԷՐ և ԷՐՆԷՍՏԻՆԱ.

ԷՐՆԷՍՏԻՆԱ բարկացած։

Թողէ՛ք ինձ հանգիստ... Պապա՛, պաշտպանեցէ՛ք խնդրեմ։

ՇԼՕՊՍ հօ վազելով։

Էրնէստինա՛, որդեակ իմ... երևակայիր, սորանք ուզում են, որ ես գլխիվա՛յր կանգնեմ։ Դէ, դո՛ւ ասա, կարո՞ղ եմ հը...

ՊՈՒՐՅԼԷՐ

Է՛, էդ ձեզ համար չնչին բան է... (Շրէյֆին)։ Պ. դիրեկտորը երևելի՛ ակրոբատ է։

ՇՐԷՅՖ Դի կողմ։

Ա՛. ուրեմն, ես չեմ սխալվում։

ՊՈՒՐՅԼԷՐ Շլեպոկն։

Դէ, ցոյց տուեցէք ձեզ է՞... մի որ և է սալտո—մորտալէ արեցէք...

ՇԼՕՊՍ

Սալտո-մորտա՞լէ։ Ե՛ս, սալտո-մորտա՞լէ...

ՇՐԷՅՖ հէգնո-ընդամբ ձիձաղելով։

Պ. դիրէկտորը գիտէ՛, թէ ում հետ գործ ունի... Պ. դիրէկտորը երևի հասկանում է, որ նա իր հինգ կանայքով շատել հեռու չի գընալ...

ՇԼՕՊՍ

Հինգ կանայքո՞վ... (Շրէյֆին)։ Ինձանում հինգ կի՞ն... Էրնէստինա՛ս, ծածկիր ականջդ։

ՇՐԷՅՖ

Մի՛ ծռմռուէք։ Ես պարոնը (Յոյց տալով Տրո—ասոյին)։ Ինձ բոլորը պատմել է։ Իսկ էդպէս ձիարշաւ կանայք... (Յոյց տալով Էրնէստինայի վերայ) ես հազարաւորն ունեմ։

ՇԼՕՊՍ

Էրնէստինա՛ս, միւս ականջդ էլ ծածկիր։

ԷՐՆԷՍՏԻՆԱ

Լաւ, պապա։

---

# ՏԵՍԻԼ 17.

## ՆՈՅՆՊ և ԱՎԳՈՒՍՏԱ

ՇՐԷՅՖ

Վերջապէս, ձեր խմբումը էսպէս ուժեղն



ունէք։ (Քարշ է տալիս նորա դէպ Տրո—ասոյին)։ Ես պարոնը ամեն քաղաքներում իսկական Հերկուլէս է հրատարակվել։

ՊՈՒՐՅԼԵՐ

Ի՞նչպէս թէ... Վայ սատանան դրան տանի... Դա համարձակվում է իմ անունս սեփականացնել իրե՞ն... (Բռնելով նորա ատ—ալ Շլեպոկն)։ Մի՛ վախեցէք պ. դիրէկտոր. ինձ վերայ յուսացէք. մենք նորա հետ կըմրցենք և հոգին կըհանենք։

ՇՐԷՅՖ

Մահուան մենամարտութիւն։ A la boks...

ՊՈՒՐՅԼԷՐ

Պատրաստ եմ... մենամարտութիւն á la boks...

ՇՐԷՅՖ

Որո՛տ և կայծակ... (Տրո—ասոյին)։ Յոյց տուեցէք սրանց ձեր ոյժը, բերէք այստեղ փթանոցները... Դուք ինձ խայտառակում էք. ես ձեր կանտրակտը կքանդեմ։

ՊՈՒՐՅԼԷՐ Շլեպոկն։

Էլ ի՞նչ էք կանգնել. ինչո՞ւ չէք պաշտպանում ակրոբատի պատիւը... (Ընդհանուր խառնակ-ընկ-ն և ղարմանք)։

ՇԼՕՊՍ, ԷՐՆԷՍՏԻՆԱ և ՏՐՈՒՍՍՕ ընկնելով ամուսնէրի վերայ։

Ախ, սիրտս գնաց...

ՏՐՈՒՍՍՕ

Պ. դիրեկտոր. ես պատրաստ եմ քանդել մեր կոնտրակտը, որովհետև ես ինչպես համալսարանի կանդիդատ. անպատվութիւն եմ համարում ինձ կրել ձեր փիթանոցները։

ՇՐԷՅՖ

Ի՞նչպես. դուք մի՞թէ Հերկուլէսը չէք։

ՊՈՒՐՅԼԷՐ

Երևելի Հերկուլէսը ե՛ս եմ։ (Բարձրաձայնո՛ւմ է փլեանոց)։

ՇՐԷՅՖ

Եւ դուք այդ ակրոբատի խմբո՞ւմն էք ծառայում։ (Ցույց տալով Շլօպի վերայ)։

ՇԼՕՊՍ վերին ատոկճանի վերա-ոլվաշ։

Ես, պարոն, ակրոբատ չեմ, այլ Ցրիգրիխսհամի պանսիոնի դիրեկտորն եմ...

ՏՐՈՒՍՍՕ վազելով Շլօպի մօտ։

Ա՛... ուրեմն ես ձեզ եմ պատկանում։

ՇԼՕՊՍ գրկելով նորան։

Նատ ուրախ եմ, շատ ուրախ եմ։

ՏՐՈՒՍՍՕ

Փառք Աստուծոյ, որ դուք ինձ այս պարոնից ազատեցիք։ (Ցույց է տալիս Շրէյֆին)։

ՇԼՕՊՍ

Իսկ ես սարանից... (Ցույց տալով Պո-ոլէրին)։

ՊՈՒՐՅԼԷՐ Շրէյֆին։

Ուրեմն ես ձեր...



ՇՐԷՅՖ Շլօպին։

Ներեցէք ինձ. ես մի փոքր տաքացայ, թողութիւն եմ խնդրում։

ԱՎԳՈՒՍՏԱ նէրա գալով։

Համեցէք. ընթրիքը պատրաստ է։

ՇԼՕՊՍ

Շնորհակալ եմ ձեզնից... Դէ, գնանք մեզ մօտ, երիտասարդ, դուք ինձ խսկոյն դուր եկաք։ (Շլօպը, Էրնէստինան և Տրուսսօն կամենում են գնալ)։

ՇՐԷՅՖ

Հա՛լտ։ Որո՛տ և կայծակ։ Մենք միասին պէտք է ընթրիք անենք։

ՇԼՕՊՍ

Է՜, ո՛չ... շատ շնորհակալ եմ ձեզնից... Դուք գուցէ դարձեալ...

ՇՐԷՅՖ և ՊՈՒՐՅԼԷՐ Շլօպին։

Օ՜, ո՛չ, տալիս ենք աղնիւ խօսք,
Մարդավարի ձեզ հետ վարուել.
Մի որ և է անկարգութիւն՝
Չի կարելի մեզնից սպասել։
Դէ՛, ուրեմն, գնա՛նք, գնա՛նք։

ԷՐՆԷՍՏԻՆԱ

Ի՞նչ է, պապա, գնա՞նք թէ ոչ։

ՇԼՕՊՍ կամաց Տրուսսօյին։

Գնա՛նք։

ՏՐՈՒՍՍՕ

Գնա՞նք։

ԲՈԼՈՐԵՔԵԱՆ Շլեպոֆն։

Դէ՛, շուտ, պապա—վեր կաց, գնանք։

ՇԼՕՊՍ

Թո՛ղ այս անգամ, այսպէս լինի
Է՛հ, մի լաւ էլ, ես քէֆ անեմ
Կեանքիս միջին այս մի անգամ
Թոյլ տամ ինձի։ Է՛հ... ի՞նչ անեմ...

ՏՐՈՒՍՍՕ

Իսկ խմե՞ն ինչպէս... խմե՞նք...

ՇԼՕՊՍ

Ինչո՞ւ չէ որ...

ԷՐՆԷՍՏԻՆԱ

Մեղք չէ՛ թէ որ մի քիչ խմենք։

ՇԼՕՊՍ

Դէ՛ որ այդպէս է՝ շուտ գնանք։

ԱՄԵՆԵՔՍ

Գնանք, գնանք։

Վարագոյր։

2779
24575
2013